

18.07.2008

Այցելություն Տավուշի մարզի Պտղավան, Արճիս համայնքներ և Գետահովիտ-Լուսաձոր ինքնահոս համակարգ

Մարզային այցելությունների հերթական վայրը Տավուշի մարզն էր: ՀՄՀ-Հայաստանի աշխատակիցների խումբն այս անգամ եղավ Ջրից դեպի շուկա ծրագրի շրջանակներում հիմնված երկու ցուցադրական տնտեսությունում և Ոռոգման ենթածրագրի շրջանակներում կառուցվելիք Գետահովիտ-Լուսաձոր ինքնահոս համակարգի տարածքում:

Տավուշի մարզի Պտղավան համայնքում է գնտվում ֆերմեր Ռաֆիկ Օհանյանի տնտեսությունը, որը հանդիսանում է Ջրից դեպի շուկայի ցուցադրական տեղամաս, և որտեղ ներդրվել են ցածրաճ պատվաստակալների վրա պատվաստված խնձորենիներ և սերմնային պատվաստակալների վրա պատվաստված կեռասենիներ ու նեկտարենու նոր սորտեր՝ Հայաստանում դրանց հարմարվողականության և արդյունավետության ուսումնասիրման նպատակով: Ցուցադրական տարածքին ՀՄՀ-Հայաստանի միջոցներով տրամադրվել են ԱՄՆ-ից ներկրված խնձորենու, կեռասենու և նեկտարենու տնկիներ: Այդ սորտերը տարածաշրջանում իրենց դրական կողմերով դրսևորվելու դեպքում կարող են հետագայում ավելի լայն օգտագործում ստանալ:

Ֆերմերը կազմակերպել է տնկման աշխատանքները (ըստ առաջադրված տնկման սխեմայի): Նա պատասխանատու է և սեփական ներդրմամբ կիրականացնի տնկանյութի մշակության ագրոտեխնիկայով նախատեսված աշխատանքների ժամանակին և որակով կատարումը, որն իր մեջ ներառում է ոռոգման, պարարտացման, հիվանդությունների և վնասատուների դեմ պայքարի, միջշարային տարածությունների մշակության աշխատանքները, ինչպես նաև՝ ծրագրի շրջանակներում ներկրված տնկանյութի անվտանգության ապահովումը:

Տարածքում տեղադրված կարճ ջրանց խողովակների օգտագործումն այստեղ հնարավորություն է տալիս կատարելու աշխատանքի, ջրի խնայողություն (հողային առուն մոլախոտերից մաքրելու և ակոսները բահով բացել-փակելու կարիք չկա) և ջրի հավասարաչափ բաշխում:

Կարճ ջրանց խողովակներ Պտղավանում



Այցելության ժամանակ ֆերմերը ցանկություն հայտնեց նաև ոռոգման կաթիլային համակարգ հիմնելու վերաբերյալ, որի իրականացման նպատակահարմարությունն ու հիմնավորվածությունը կորոշվի ծրագրի մասնագետների առաջիկա այցի ժամանակ:

Արճիս համայնքի տեղամասում հիմնված են պտղատուների տնկարանում կորիզավոր և հնդավոր պտղատեսակների ցածրած պատվաստակալներ, նախատեսվում է մայրուտ տնկարանի տեսականու նորացում, թարմացում: ՀՄՀ-Հայաստանի շրջանակներում ցուցադրական տարածքին տրամադրվել են ԱՄՆ-ից և Ռուսաստանի Դաշնությունից ներկրված կորիզավոր և հնդավոր պտղատեսակների թզուկային պատվաստակալներ, ինչպես նաև՝ խնձորենու և կեռասենու միամյա տնկիներ, որոնք միտված են տնկարանում սորտային կազմի նորացմանը և տարածաշրջանում այդ նոր սորտերի հարմարվողականության ուսումնասիրմանը:

Ֆերմեր Վարդան Բերոյանը կազմակերպել է ընտրված տարածքում ստացված տնկանյութի տնկման աշխատանքները (ըստ առաջադրված տնկման սխեմայի): Նա պատասխանատու է և սեփական ներդրմամբ կիրականացնի տնկանյութի մշակության ազրոտեխնիկայով նախատեսված աշխատանքների ժամանակին և որակով կատարումը, որն իր մեջ ներառում է պատվաստակալների բազմացում, դրանց վրա պատվաստի կատարում, տնկիների ստացում, ինչպես նաև տնկիների ոռոգման, պարարտացման, հիվանդությունների և վնասատուների դեմ պայքարի, միջշարային տարածությունների մշակության աշխատանքները և անվտանգության ապահովումը:

ՀՄՀ-Հայաստանի թիմն այցելեց նաև Տավուշի մարզում կառուցվելիք **Գետահովիտ-Լուսաձոր ինքնահոս համակարգի** տարածքը, որտեղ ուսումնասիրել են տեղանքը, ամկա խնդիրները: Նախատեսվում է, որ կառուցվելիք ինքնահոս համակարգի շնորհիվ հուսալի ոռոգում կստանա 300 հեկտար հող և կլուծարվի 2 պոմպակայան, ինչի արդյունքում հնարավոր կլինի խնայել 0.6 մլն. կվտ/ժամ էլեկտրաէներգիա: